

Վահան Մամիկոնեան ըստ Ղազար Փարպեցւոյ
գրեց Յ. Ճաղարբէգեան. Տփլսիս. 1894. դպ. Շա-
րաձէի եր. 8. 138. գիշն է 40 կպ.

Արդարացի գանգատներ են լսուում ամենայն
օր, որ մեր մանուկ սերունդը զուրկ է ընթերցանելի
գրքերից: Աերջին ժամանակներս այդ գանգատնե-
րից դրդուած բազմաթիւ փորձեր են լինում դո-
հացնելու մանկական ընթերցանութեան պահանջնե-
րին: Այսպիսի փորձերիցն է և պ. Ճաղարբէգեանի
այս աշխատութիւնը: Արկնակի գնահատելի է այս
գրքշկը, որովհետեւ նա պատմում է մի հայ դիւցազ-
նի գործերը և այն էլ մի նշանաւոր հայ մատենագրի
բերանով: Մեր նախնի մատենագիրներից շատ քչերն
են այժմ մատչելի, նրանցից հազիւ մի երկու հատ
են թարգմանուած աշխարհաբար և այն էլ ոչ գոհա-
ցուցիչ կերպով: ուստի և առանձին գովասանքի ար-
ժանի է պ. Ճաղարբէգեանի այս գործը: Ուրախ ենք
որ կարող ենք այսօր արձանագրել մեր հին գրակա-
նութեան ժողովրդական դարձնելու առաջին փորձը:

Ինչքան սիրելի է մեզ այսպիսի աշխատութիւնը, այնքան ևս կը ցանկայինք, որ դա հմտութեամբ կատարուած լինէր, Պարոն Ճ.-ի գործը երկու թերութիւն ունի. նախ նա դժուարացել է նիւթը մանուկներին ըմբռնելի ձևով մատակարարել, և երկրորդ խնամք չէ տարել լեզուի յստակութեան և մաքրութեան վերայ. նրա լեզուն տեղ տեղ ըստրուկ է գրարարի և շատ տեղ էլ զուտ օտարաբանութիւն է. Անյաջող է մանաւանդ առաջին փոքրիկ գլուխը (եր. 5—6) որ տեղ անհետ թերութիւններ ևս կան, օր. «Հայրենիքի կարօտն էին քաշում, բայց հայրենիքը չէին ճանաչում» (? ?), Տեղիս սղութիւնը թոյլ չի տալիս մեզ լեզուի թերութիւններից օրինակներ բերել, սակայն յիշենք մի քանիսը. «յաղթեցին խորամանկութիւնը» «յանդիմանութիւնը» «աւրաւարհման տանել» «ամբաստանեց կաթուղիները» «այդ բանից շատ էլ չեմ տխրել» . . . Մանուկների համար նշանակուած գրքերը պէտք է ազատ լինին այսպիսի +եւ-ի-ն-ա-ի-ն- նիւն-ի-ն-ի-ն-:

Գրքոյկս նուիրուած է հայ բարեգործ պ. Ա.
Ծատուրեանին: Ծաւալին նայելով՝ մեզ թանգ է
թւում գրքոյկիս գինը:

L.

Քամալեանց Ս. Գալս - Ափս 1893 թ. Գ. 10 կա-
պ. Քամալեանը պատուաւոր տեղ է բռնում մեր գը-
րականութեան մէջ իր ժողովրդական հէքիաթների
հրատարակութիւնով: Բացի դրանից նա հրատարա-
կել է և իր սեփական փոքրիկ զրոյցները և վէպիկ-
ները, որոնք իրանց բնաւորութեամբ շատ մօտ են
ժողովրդական գրականութեան: Պ. Քամալեանցը
իրբւ գրող մի մեծ արժանիք ունի, որից զուրկ են
մեր արդի վիպասաններից շատերը՝ նրա լեզուն հա-
յերէն է, կենդանի է և պարզ: Այդ է պատճառը որ
նրա գրութիւնները միշտ կարգացուում են մօծ հա-
ճոյքով: Նոյնը կարելի է ասել և նոր լոյս տեսած փո-
քրիկ պատկերի մասին, որը վերցրած է մեր կեանքի
մօտ անցեալ: Պատմութիւնը վերցրած է յիսնական
թուականների թրքերի արշաւանքներից: Հերսը Ա-
խլքալսկցի Գալս Ափոն է, որ 70 տարեկան հասա-
կում էլ, տասը տարի անցած էլ մնում է նոյն քաջ,
ազնիւմարդը, ինչպիսին էր իւր երիտասարդ հասա-
կում: Մի-երկու չափազանցութիւնները պտմութեան
մէջ կարելի է բացատրել այն հանգամանքով, որ
հեղինակը շատ է վարժուել հէքիաթների ոճին:
Գրքոյը կարգացուում է հետաքրքրութեամբ: Մի-
այն մեր կարծիքով այսպիսի գրքերը 3-5 կոպեկից
թանգ չպէտք է լինի, որովհետեւ դրանց կարգացողնե-
րը մեր գիւղացիներն ու երեխաները պէտք է լինեն,
որոնց համար 10 կոպ. մեծ փող է:

Ե. Սպիրի. «Այծարած Մօնի» Գերմաներէնից Թարգմանեց Իսահակ Յարութիւնեան, Թիֆլիզ 1895 թ. Գինն է 15 կ. Գրքիս բովանդակութիւնը առնուած է զուգարական կեանքից, Այծարած Մօնին գիւղական մի պարզ հովիւ է՝ օժտուած մաքուր խղճով և ազնիւ զգացմունքներով, Աստա՜հ և աներկիւղ բարձրանում է նա սարերի և բլուրների գագաթները համոզուած լինելով, որ այդտեղ աւելի մօտ է Աստծուն և Աստուած տեսնում է նորան, որից նա ոչ մի բան չէ կարող Թաքցնել և որը կարիքի ժամանակ անպատճառ կ'օգնէ իրեն, այդպէս էր սովորեցրել նորան իւր պառաւ տատը, Ահա այդ է պատճառը, որ առաջին իսկ անարդար գործը հոգեկան մեծ անհանգստութիւն է պատճառում նորան այդ ժամանակից է, որ նա ուխտում է միշտ անել այն, ինչ որ Աստուծոյ առաջ արդար է, Այս գիրքը օգտակար է մանուկների ընթերցանութեան համար, Թարգմանչի լեզուն պէտք էր աւելի մշակել և դիւրմընեւի դարձնել, Հրատարակուած է շատ մաքուր: